



ՀԱՅ  
ՏԱՐՎԻՐ ԳՐԵՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՅՈՒՆԱՀԱՆՐԱԾՈՒ


ВЫСТАВКА  
ИСТОРИИ АРМЯНСКОЙ ПЕЧАТНОЙ КНИГИ





Зим 98г в Генуе  
изображена пт. Мария  
Годунова, мать - это  
изображение изображено

27. III. 47г. Генуя  
бумага



КОМИТЕТ ПО ДЕЛАМ КУЛЬТУРНО-ПРОСВЕТИТ. УЧРЕЖДЕНИЙ  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

---

ВЫСТАВКА  
АРМЯНСКОЙ ПЕЧАТНОЙ КНИГИ

ПУТЕВОДИТЕЛЬ

---

ЕРЕВАН О 1946

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՅԻ ՄԻԳԵԼՈՒՏՐԵՎԻ ՍՊՈՎԵՏԻ ԿԵՑ ԿՈՒՆԴԱՅՈՒԹ-ՈՒԹԱԳՐԱԳՈՐԾՎԵԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՎԵՐԻ ԿՈՐԻՏՏԵ

002(47.925)(064)


F

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳՐ-ՔԻ

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

1-1976  
A



ԵՐԵՎԱՆ

○


1946

Կազմեց Ա. ԲԱԲԱՅԱՆ  
Составил А. БАБАЯН

Հայաստանի Սովետական Դրոշների Միության երկրորդ  
համագումարի առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին  
կից Կուլտուր-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեն  
ԱՀ. Մյասնիկյանի անվան Գետական Հանրային Դրադարանի  
հետ կազմակերպեց «Հայ տպագիր գրքի ցուցահանդես»:

Այս ցուցահանդեսի կազմակերպումը մի խոշոր երկառյթ է  
մեր ժողովրդի գրական-հասարակական և կուլտուրական կյանքում:  
Բազմադարյան պատմություն և կուլտուրական հարուստ ժառան-  
գություն ունեցող հայ ժողովուրուց առաջին անգամ, միայն սո-  
վեական կարգերում կարողացավ ընձեռնել այնպիսի մի կուլ-  
տուրական ձեռնարկության, ինչպիսին հանդիսանում է այս ցու-  
ցահանդեսը: Նա թե իր բովանդակությամբ և թե իր ընդգրկած  
մասշտաբով իր նախորդը չի ունեցել:

Ցուցահանդեսը ընդգրկում է հայերեն տառաջին տպագիր  
գրքից, այսինքն՝ 1512 թվից մինչև մեր օրերը ընկած ժամանա-  
կաշրջանը և հետապնդում է մի հիմնական նորատակ՝ ցույց տալ  
տպագիր գրքի կուլտուրան հայերի մեջ, նրա դարավոր պատմու-  
թյունը և անցած զժնդակ ուղին մինչև մեր լուսաղայծառ օրերը:



Առաջին հայ տպագրիչ  
**Զակար Մելքոնյան**  
Армянский первопечатник  
**Акоп Мегапарт**

ՊՐՈՓ. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ  
Արվեստի լաստակ. գործիչ

## ՀԱՄԱԾԱՑ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ՏՊԱԴԲՈՒԹՅԱՆ

Գուտենբերգի անմահ գյուղը, որ տեղի ունեցավ  
15-րդ դարի կեսերին, աբագ կերպով իր լայն տարա-  
ծումը գտավ Արևմտյան Եվրոպայում։ 16-րդ դարի  
առաջին տասնամյակում Իտալիայի միայն Վենետիկ  
քաղաքում արդեն գործում էին 200-ի չափ տպարան-  
ներ, որոնցում զանազան լեզուներով տպագրվում էին  
բազմատեսակ գրքեր։

Հայերեն առաջին տպագիր գիրքը հրատարակվել  
է Գուտենբերգի գյուղից մոտ 60—65 տարի հետո,  
1512 թվին, Վենետիկում։ Հայ տպագրության նախա-  
ձևոնողն է եղել ինքն իրեն Մեղապարտ Հակոբ ան-  
վանող մի հայ մարդ։ Սա պատրաստել է տալիս տպա-  
րանական տառեր և այդ թվականին Վենետիկի տպա-  
րաններից մեկում տպագրում է «Պարզատումար» անու-  
նով մի գիրք։ Հետեյալ՝ 1513 թվին նույն տպարա-  
նում նա տպագրում է չորս ուրիշ գրքեր, այն է՝  
«Պատարագատետր», «Աւրբաթագիրք», «Աղթարք» և  
«Տաղարան»։ Հայերեն գրքի հրատարակության իրու-  
դությունը այդ վաղ ժամանակում մի նշանավոր երե-  
վույթ է մեր կուլտուրայի պատմության մեջ։


Հակոբի հրատարակությունների ժամանակից անցնում է ավելի քան 50 տարի։ 1563 թվին քաղաքական նպատակներով Հռոմ է մեկնում հայոց կաթոլիկոսի կողմից ուղարկված մի պատգամավորություն՝ Արգար Թոխատեցու կամ Դալիս Արգարի գլխավորությամբ։ Սակայն, երբ այդ պատգամավորությունը իր նպատակին չի հասնում, Արգարը վերադառնում է Վենետիկ, հայերեն տպագրական տառեր է փորագրել տալիս և 1565 թվին լույս է ընծայում մի թերթօրացույց և մի սաղմոս։

1567 թվին Արգար Թոխատեցին իր տառերը հետնառած անցնում է Կ. Պոլիս և այնտեղ սարքավորում է իր սեփական տպարանը։ Չորս տարվա ընթացքում նա հրատարակում է 7 գիրք, որոնց թվում «Այբբենարան», «Քերականություն», «Տոնացույց» և «Տաղարան»։ 1570 թվին դադարում է Արգարի հրատարակչական գործունեությունը մեզ անհայտ պատճառներով։

Այնուհետև Դիարբեքիր քաղաքից 1583 թվին Հռոմ է մեկնում Հովհաննես Տերզնցին, որը 1584 թվին այդտեղ տպագրում է «Տոմար Գրիգորյան» անունով գիրքը, որի թարգմանությունը լատիներենից կատարում է ինքը։ Նույն Տերզնցին Հռոմից անցնում է Վենետիկ, որտեղ 1587 թվին տպագրում է մի սաղմոս։ Մրանով վերջանում են 16-րդ դարի հայ տպագրությունները, որի ընթացքում ընդամենը տպագրվել է 15 անուն գիրք և մի թերթօրացույց։

Հետեւյալ՝ 17-րդ դարում հայ տպագրությունը տառածվում է նոր երկրներում։ Գրքեր են լույս տեսնում Լեհաստանում, Իրանում, Ֆրանսիայում, Հոլան-

գիտայում և Գերմանիայում։ Հայկական տպարաններ  
են հիմնվում նաև կ. Պոլսում և Զմյուռնիայում,  
Առանձնապես նշելի են Նոր Զուղայի Ամենափրկիչ  
կոչվող վանքի տնայնագործական եղանակով պատ-  
րաստված տպարանը և Ամստերդամի հայ տպարանը,  
որը հիմնվելով նույն դարի 60-ական թվականներին,  
իր գոյությունը շարունակում է մինչև 1717 թիվը,



Հակոբ Մեղապարտի  
հրատարակչական նշանը

լույս ընծայելով ընդամենը 51 անուն գիրք։ Ամստեր-  
դամյան տպարանում նշանավոր գործիչներ են եղել  
Ռուկանցին, Թովմա եպիսկոպոս, Նուրիջանյանը,  
Միքայել Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիները։ Այս  
տպարանում են տպագրվել առաջին անգամ հայերեն  
«Աստվածաշունչը», Մովսես Խորենացի, Առաքել Դավ-  
թիթեցի, «Աղվեսագիրքը», «Եարականը» և այլն։ Ապա  
նշելի է կ. Պոլսում 1684 թվին Գրիգոր Մարզվանցու  
հիմնած տպարանը, որը շարունակում է գործել մինչև  
հետեւյալ դարի 30-ական թվականները։ Այս տպարա-

նից են առաջին անգամ լույս տեսել «Յայսմաւուր»  
քը», Ագաթանգեղոս, Զենոպ Գլակ և ուրիշ գրքեր:

Զանազան քաղաքներում տպագրված հայերեն գըլու-  
քերի թիվը 17-րդ դարում հասնում է 140-ի:

18-րդ դարում հայ տպագրական գործը ավելի  
լայն շրջաններ է ընդունվում: Առաջին երկու տաս-  
նամյակներում շարունակում է գործել Ամստերդա-  
մի տպարանը: Վենետիկում հայ գրքի տպագրությամբ  
զբաղվում են իտալական մի քանի տպարաններ և  
լույս են ընծայում բազմաթիվ գրքեր: Այս տպարան-  
ներում են տպագրվել Միհթար Սեբաստացու «Հայ-  
կազման բառարանը», Զամչյանի «Հայոց պատմությու-  
նը», «Աստվածաշունչ» և մի շարք այլ գրքեր: Հայե-  
րեն գրքեր տպագրում են նաև Հոռմի, Միլանի և Բա-  
տուայի տպարանները:

Այս դարում կ. Պոլսում հայ տպագրության գործը  
զրվում է հաստատուն հիմքերի վրա: Առաջին և նշա-  
նագոր տպագրիչը հանդիսանում է Աստվածատուր  
Ապուչիսցին (Արագյանը): Դարասկզբում հիմնած նրա  
տպարանը իր գոյությունը շարունակում է ավելի քան  
150 տարի: Նրա ժառանգներից բեղուն գործունեու-  
թյուն է ցույց տվել մասնավորապես Պողոս Արագյա-  
նը, թե՛ որպես տառերի և ծաղկագրերի փորագլեչ  
վարպետ և թե՛ որպես տպագրիչ-հրատարակիչ:

Կ. Պոլսում նույն այս դարումն են գործել Սարգիս  
Դպիր, Պետրոս Լատինացի, Բարսեղ և Հակոբ Սե-  
բաստացի եղբայրները և էլի ուրիշները, որոնք իրենց  
հիմնած տպարաններից լույս են ընծայել բազմաթիվ  
գրքեր:

Այս դարի երկրորդ կեսին տպագրական գործը

առաջին անգամ հիմնավորվում է Հայաստանում՝ կջ-  
միածնում: Գործի հիմնադիրը՝ հանդիսանում է Սիմեոն  
կաթողիկոս Երևանցին: Նա 1771 թվին հիմնում է  
տպարան և թղթի գործարան: Էջմիածնի վանական  
տպարանը ավելի է ծաղկում և զարգանում հետեւյալ  
դարում՝ Գևորգ Դիկ և Խրիմյանի կաթողիկոսության  
ժամանակ, իր գոյությունը պահպանելով մինչև մեր  
դարի տասական թվականները:



Արգար Թոխատեցու  
հրատարակչական նշանը:

18-րդ դարում տպարաններ են հիմնվել նաև Հընդ-  
կաստանում: Ուշագրավ է Մաղրասի Շահամիլ Սուլ-  
թանումի տպարանը, որը լույս է ընծայել հայտնի  
«Յորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերը: Մաղ-  
րասում երկրորդ տպարանը հիմնում է Հարություն  
Շմավոնյանը, որտեղ մինչև գարի վերջը տպագրվել է  
8 անուն գիրք և առաջին հայ պարբերականի՝ «Աղ-

դարարի» համարները: Դարի վերջին Կալկաթայում  
Հովսեփ Ստեփանոսյանը հիմնում է իր տպարանը: Այս  
նուհատն Կալկաթայում հիմնվել են և ուրիշ տպարան-  
ներ, որոնք ցուցյ են տվել բնդուն գործունեություն:

Այս դարի վերջին քառորդում են հիմնվում Մխի-  
թարյանների տպարանները նախ Տրիեստում, ապա  
Վենետիկի և, Դազար կղզում: Սրանք իրենց գործու-  
նեությունը դերադանցապես ծալալում են հետեւալ  
դարերում:

Դարավերջում հայ տպագրության գործի սկիզբ է  
դրվում նաև Ռուսաստանում: Լոնդոնում ապրող ջու-  
ղայեցի գրասեր և հարուստ վաճառական Գրիգոր Խալ-  
դարյանցը պատրաստել է տալիս հայ տպագրական  
տառեր և 1780 թվին տեղի տպարաններից մեկում  
տպագրում է մի գիրք: Այնուհետև իր տառերը հետն  
առած Խալդարյանցը գալիս է Պետերբուրգ և այնտեղ  
սարքավորում է իր սեփական տպարանը:

Խալդարյանցի մահից հետո 1789 թվին տպարանը  
Ռուսաստանի հոգևոր առաջնորդ Հովսեփ եպիսկոպոսը՝ Ար-  
դությանի աջակցությամբ տեղափոխվում է Նոր Նա-  
խիջևան և կոչվում է «Տպարան նորին բարձր սըր-  
բազնութեան»: Այս տպարանը Նոր Նախիջևանում  
գործելով մինչև 1796 թիվը՝ փոխագրվում է Աստրա-  
խան:

19-րդ դարում տպագրական - հրատարակչական  
գործը ընդհանուրապես հասնում է աննախընթաց բարձ-  
րության: Հայկական տպագրությունը հետ չմնաց այս  
առաջդիմական շարժումից:

Կ. Պոլսում Արապյան տպարանն ընդարձակում է  
իր գործունեությունը: Երեան է գալիս մի ուրիշ տը-

պարանապետ Պողոս Աբագյանից ոչ պակաս տաղան-  
դավոր է դործունյա: Այդ մարդը Հովհաննես Մյու-  
հնտեսյանն էր: Անվանի փորագրիչ-զբաձուլիչ, նոր



Տ. ԱՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ ԱՐ ԱՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ ԱՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ  
ԹՈՒՄԵ (թուման):

Հ. Ա. Ա. (ՀՅՈՒՄԵ) ԱՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ ԱՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ  
ԹՈՒՄԵ (թուման):

տեսակի տառերի հնարիչ՝ Հովհ. Մյուհենտեսյանը իր  
բազմաթիվ հրատարակություններով մեծ տեղ է գրա-  
վում: Հայ տպագրության պատմության մեջ:

Մինչև դարի վերջը Կ. Պոլսում բացվում են մի

շարք նոր տպարաններ։ Դպրոցական ցանցի ծավալու-  
մը քաղաքներում և գավառներում, ինչպես և լրագրե-  
րի և հանդեսների բազմանալը պահանջ են առաջաց-  
նում տպարանների աճման։ Մենք տեսնում ենք նոր  
տպարաններ Զմյուռնիայում, Երուսաղեմի, Արմաշի և  
Վարագա վանքերում, Սեբաստիայում, Թոքատում  
և այլ տեղերում։

Վենետիկում ու Ղազարի Միաբանությունը իր  
բարեկարգ տպարանից լույս՝ ընծայում նոր Հայ-  
կագյան երկնատոր բառարանը, Բագրատունու, Ալի-  
շանի և այլ նշանավոր հեղինակների ընտիր երկերը։  
Տրիեստում գործող Միաթարյանները տեղափոխվում  
են Վիեննա և այնտեղ՝ շարունակում են իրենց հրա-  
տարակչական գործունեությունը մինչև մեր ժամա-  
նակները։

Դարի կեսերին Փարիզում ապրող ձանիկ Արամ-  
յանը հայ տպագրական տաղերի ռեփորտ է կա-  
տարում։ Նա 50-ական թվականներին իր բարեփոխած  
նորատեսակ տառերով Փարիզում տպագրել է տալիս  
մի քանի գրքեր և պարբերականներ, ապա գնում է Կ.  
Պոլիս և այնտեղ սարքավորում է իր սեփական տպա-  
րանը։ Արամյան տառերն ընդունելություն են գտնում  
ժամանակի հայ տպարաններում և շարունակում են  
իրենց գործությունը մինչև այսօր։

Մոսկվայում Լազարյան ճեմարանը իր հիմնադրու-  
թյան թվականից (1814 թ.) 14 տարի անց հիմնում է  
իր տպարանն ու ձուլարանը։ Այս բարեկարգ տպա-  
րանը իր գոյությունը պահպանում է մինչև մեր դարի  
10-ական թվականները։ Այստեղ տպագրվել են հայե-  
րեն և ոռոսերեն բազմաթիվ գրքեր՝ պատմաբանակի-

բական, հայագիտական, արևելագիտական և այլ բը-  
նույթի:

1858 թվին Թիոդոսիայում հիմնվում է Խալիպյան  
դպրոցը: Սրան կից հետևյալ տարվանից բացվում է  
«Ազգային տպարանը»: Այս տպարանից հինգ-վեց տար-  
վա ընթացքում լույս է տեսել 35 անուն գիրք: 1874  
թվին Խալիպյան գպրոցի հետ փակվում է նաև տպարանը:

Վանեցի վաճառական Գիվորդ Արծրունին 1823  
թվին արտասահմանից վերադառնալով Թիֆլիս մի  
տպարան է բերում և այն, 1824 թվին, նվիրում է  
նոր բացվող Ներսիսյան գպրոցին: Այս տպարանից են  
լույս տեսել առաջին ամսամ Խաչատուր Աբովյանի  
«Վերք Հայաստանին», Զարալյանի «Ճանապարհոր-  
դությունը», Երեցփոխյանի «Հայերեն-ուսուերեն բա-  
ռարանը» և այլ գրքեր, ինչպես և 1846 թ. կովկասա-  
հայ անդրանիկ պարբերականը՝ «Կովկաս» լրագիրը:  
Թիֆլիսում երկրորդ հայկական տպարանը հիմնում են  
Հ. Էնֆիածյանը և Գ. Մելքոնյանը: 60-ական թվա-  
կաններից այդ տպարանում են տպագրվում «Կոռունկ»,  
«Հայկական աշխարհ» հանդեսները և «Մեղու Հայաս-  
տանի» լրագիրը: 1870 թվականներին նույն քաղա-  
քում տպարան է հիմնում Հովհ. Մարտիրոսյանը: Այս  
տպարանը թե իր երկարակեցությամբ և թե տպա-  
գրած բազմապիսի հրատարակություններով բռնում է  
առաջնակարգ տեղ: Թիֆլիսից հետո, նույն դարում,  
հայ տպարաններ են հիմնվել նաև Անդրկովկասի՝  
Շուշի, Շամախի, Բաքու, Գանձակ, Երևան, Ալեք-  
սանդրոպոլ, Ախալցխա և նոր Բայազետ քաղաքներում:

Երեանում առաջին տպարանը բաց է անում Զա-  
քարիա Գևորգյան Հակոբյանցը 1876 թվին, որին  
կարճ ժամանակից հետո ընկերանում է էմին Տեր-

Գրիգորյանը: 1880 թ. լույս է տեսնում Երեանի առաջին պարբերականը՝ «Պսակ» լրագիրը, Վ. Պապաջանյանի խմբագրությամբ:

20-րդ դարի սկզբներից հայ տպագրական գործը մեծ ծավալ է ստանում Պոլսում, Թիֆլիսում, Եգիպտոսում, Բալկաններում, Հունաստանում, Ֆրանսիայում և այլն: Փարիզի 20-ի չափ հայ տպարաններում տպագրվել են մի մեծ շարք գրքեր ընտիր հրատարակությամբ, այնպես էլ 70-ից ավելի պարբերականներ:

Դարասկզբներին մի հայկական տպարան էլ բացվում է Ռուսական Շուլանդիա: Հյուսիսային Ամերիկայում, բացի Նյու-Յորք և Բուստոն քաղաքներից, հայերեն գրքեր ու հանդեսներ են լույս տեսել Ֆրեդնո, Չիկագո, Պոուլիդենս, Ֆիլադելֆիա և այլ քաղաքներում:

Ռուսաստանում Սովետական իշխանության հաստատվելուց հետո հիմնովին փոխվում է երկրի տնտեսական և կուլտուրական կյանքը: Արդյունաբերական գործարանային բոլոր ձեռնարկությունները, որոնց թվում և պոլիգրաֆիական հիմնարկները պետականացվում են: Մանր-մունր և մասնավոր տպարանները, ինչպես և հրատարակչությունները հետզհետե վերանում և ձուլվում են խոշոր տրեստների և պետական հրատարակչությունների մեջ:

Երեանում գոյություն ունեցող տպարաններից կազմվում է մի ընդհանուր միավոր և հանձնվում է Է այն ժողովներին: 1921 թ. հունիսին հիմնվում է Հայաստանի Պետական հրատարակչությունը (Պետհրատը): Կազմակերպվում է Հայպոլիգրաֆտրեստը և տպարանական ամբողջ գործի ղեկավարությունը

հանձնվում է Տրեստի վարչությանը: 1926 թվին ըստ  
կըսվում է Հայպոլիդրաֆորեստի մեծ շենքի կառուցու-  
մը, որը ավարտվում է 1928 թվին: Այս շենքն ընդ-  
գրկում է իր մեջ տպարանական, վիմագրական, ցին-  
կոգրաֆիայի, կազմարարական, տողարանի, տառածու-  
լարանի բոլոր բաժինները: 1930 թվին նույն տպա-  
րանը հարստանում է ոռոտացիոն մեքենայով: Կազմա-  
կերպվում է նաև լինոտիպ մեքենաների բաժին տառ-  
ուը մեքենայով: Հետագայում կազմակերպում է և քա-  
ղաքական գրականության հրատարակչությունը (Քաղ-  
հրատ) իր տպարանով:

1937 թվից վերանում է Հայպոլիդրաֆորեստը:

Դրա տպարանը բաժանվում է երկու մասի. մի մասը  
գտառնում է Պետհրատի տպարանը, մյուս մասը՝ ՀՍՍՌ  
Ժողկոմսովետին կից Թերթերի և ամսագրերի տպա-  
րան, որոնք գործում են մինչև մեր օրերը:

Բացի դրանցից, Երևանում ներկայումս գործում  
են Ֆիտոթյունների ակադեմիայի, Հեռակա Մանկա-  
վարժական ինստիտուտի, Բլանկային հրատարակչու-  
թյունները իրենց տպարաններով, ինչպիս և Երքաղ-  
սովետի տպարանը: Երեսունութ տպարաններ գործում  
են Հայաստանի ցրջանային կենտրոններում, որտեղ  
տպագրվում են տեղական թերթերը:

Վերջին տասնամյակներում Պետհրատը դառնում է  
ուսուցչակիայի խոշոր հիմնարկներից մեկը: Այսուղ  
հրատարակում են մարքսիզմ-ինինիզմի կլասիկների  
երկերը, քաղաքական-մասսայական, գեղարվեստա-  
կան, գիտական-հանրամատչելի, մանկական և պատա-  
նեկական, գյուղատնտեսական, գրականագիտական,  
պատմա-աշխարհագրական, երաժշտական գրականու-  
թյուն, դասագրքեր, քարտեղներ, բառարաններ, ու-

դեցույցներ, օրացույցներ, պարբերականներ և այլն:

Պետհատի Գեղարվեստական զրականության ըամբնը վերահատարակել է գրեթե բոլոր հայ կլասիկաներին, ինչպես և ժամանակակիցները զբողների լավագույն աշխատությունները: Հրատարակել է նույնպես ոռուսական և արևմտահիմքոպական մի շաբթ կլասիկաների երկերը, Վրաստանի, Աղբյիջանի, ինչպես և Ռուսականացներից զբականություններից հատընտիր գործեր, իրանի զբականություններց՝ Ֆիրզուսի և Խայմ:

Պետհատի հրատարակությամբ են լույս տեսնում Հայաստանի Սովետական Գրողների Միության օրոքաններ՝ «Գրական թերթը», «Սովետական գրականություն» և արվեստ», ինչպես և «Հոկտեմբերիկա» պարբերականները:

1936 թվին Երևանում կատարվեց Գրքի պալատի հիմնադրումը: Ներկայումս այդ շենքի մի մասը ոպատրաստ է, ուր արգեն տեղավորված է Հայոցեանհրատը իր բազմաթիվ բաժանմունքներով, նաև մի քանի խմբադրություններ:



ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՕԶԱԽՆԵՐԻ

Հայ ժողովրդի ստեղծած բազմարովանդակ և հաւ-  
քուստ կուլտուրայի մեջ իր նշանակալից տեղն ունի  
տպագիր գրքի կուլտուրան: Ինչպես յուրաքանչյուր  
ժողովրդի, նույնպես և հայ ժողովրդի հասարակական,  
քաղաքական և կուլտուրական կյանքում տպագիր  
գիրքը խաղացել է մեծ դեր: Հայ ժողովուրդը իր դա-  
րավոր տառապանքների մեջ, իր կյանքի ամենագործն-  
դակ ովայմաններում երթեք չի կտրվել գրքից, տպա-  
գրությունից: Հայաստանը գարեր շարունակ հեծել է  
Թյուրքիայի և Իրանի ծանր տիրապետության տակ:  
Միջնադարի խավարի այդ երկրները հնարավորու-  
թյունները չեն տվել հայկակոն ընաշխարհում որևէ  
կուլտուր-լուսավորական աշխատանքի, այդ թվում և  
տպագրության:

Դեռևս միջին դարերից սկսած քաղաքական ծանր  
երադարձությունների հետեանքով հայ ժողովրդի խո-  
շորագույն զանգվաճները հեռացել են մայր երկրից,  
ցըկել են ողջ աշխարհով մեկ և տարբեր երկրներում  
ու վայրերում հիմնել են տպարաններ, օտար երկնքի  
տակ ստեղծել են գիր և գրականություն և կուլտու-  
րայի այդ հեռավոր օջախներից իրենց բոլոր ուժերը

ի սպաս են դրել հարապատ ժողովրդի լուսավորության գործին:

Հայերեն առաջին տպագիր գիրքը լույս է տեսել 1512 թվին Վենետիկում, որի հետ հայերը, գերազանցապիս առևտրական նպատակներով, սերտորեն կալված են եղել դեռևս Կիլիկյան հայկական իշխանության օրոք: Մինչև հայերեն այդ առաջին գրքի տպագրումը Վենետիկում երկար ժամանակ դայություն ուներ արգեն հայկական գաղութ: Առաջին գրքի տպագրությունից հետո այդ գաղութը իր հասարակական և կուլտուրական կյանքը ավելի ծավալուն կերպով շարունակել է և հետագայում: Իսկ 1701 թվին, երբ Միհթար Սեբաստացին հիմնադրում է այնտեղ իր միաբանությունը, Վենետիկը այնուհետև դառնում է հայկուլտուրայի խոշոր օջախներից մեկը:

Հայ տպագրության այդ առաջին օջախից հետո հետզհետե առաջ են գալիս տպագրության նորանոր օջախներ տարբեր երկրներում և քաղաքներում, այսպիս կոչված «հայ գաղութներում»: Եվ ահա տասնեւթերորդ դարի վերջին քառորդում, 1771 թվին Միմեռն երեանցու ջանքերով և Մադրասում ապրող ջուղայեցի Գրիգոր Զաքիկենցի նյութական օժանդակությամբ, չնայած իրանական տիրապետության դաժան պայմաններին, հնարավոր է լինում էջմիածնում կաղմակերպել տպարան և սեփական թղթի գործարան, որով և տպագրության ու հրատարակչական գործի սկիզբ է դրվում հայ բնաշխարհում:

Թե՛ որքանով է հարապատ եղել տպագիր գրքի կուլտուրան հայ ժողովրդին՝ ցույց է տալիս այն փաստը, որ դեռևս 17-րդ դարի առաջին կիսում, 1640 թվին, Իրանի հեռավոր անկյուններից մեկում,

Սպահանի մոտ գտնվող Նոր Ջուղա գյուղաքաղաքում  
հայերը, առանց տպարան տեսնելու, հիմնադրում են  
տպարան, որի թե՛ տպագրական մամուլը, թե՛ տանե-  
րի փորագրումն ու ձուլումը և թե՛ անդամ տպագրա-  
կան թուղթը պատրաստում են իրենք՝ տնայնագոր-  
ծական եղանակներով և սկսում են հրատարակչական  
գործունեություն։ Նոր Ջուղայի տպարանը, ինչպիս և  
նրանում տպագրված գրքերը հանդիսանում են առա-  
ջինը ոչ միայն ընդհանրապես իրանում, այլև Մերձա-  
վոր Արևելքում։

Հայ ժողովուրդը, շատ ուրիշ ասածավոր ժողովուրդ-  
ների հետ միասին, իրավունք ունի հպարտանալու իր  
գրականության հարստությամբ։ Մոտ չորս և կես դար  
տեղությամբ տպագրության պատմություն ունիցող  
մեր ժողովուրդը տիվել է ոչ միայն խոշորագույն գոր-  
ծեր, այլև թարգմանել է մայրենի լեզվով գիտության  
և գրականության համաշխարհային կլասիկներին։  
Հայերենով լույս են տեսել Արքիստոտելի, Պլատոնի,  
Ցիցերոնի, Սենեկայի, Թուկիդիտեսի, Քսենոֆոնի, Տա-  
կիտոսի, Սալյուստոսի, Հոմերոսի, Վիրդիլիոսի, Սոս-  
փոկլեսի, Եվլիպիդեսի, Դանտեի, Խայամի, Շեքսպի-  
րի, Տասոսյի, Մոլիերի, Վոլթերի, Գյոթեի, Շիլերի,  
Բայրոնի, Հյուգոյի, Տուտոյի, Պուշկինի, Լեռմոնտո-  
վի, Գրիբոյեդովի, Զեխովի, Գորկու և շատ ուրիշների  
երկերը։

Մեր տպագիր գրականությունը խոշոր ծառայու-  
թյուն է մատուցել և համաշխարհային գրականու-  
թյան։ Այնպիսի պատմական մեծ արժեք ներկայաց-  
նող գործեր, ինչպիսիք են Եվմերիոս Կեսարացու «Ժա-  
մանակագրականքը», Փիլոն Երրայացու «Յաղագս նա-

խախնամութեան և յաղագս կենդանեաց» աշխատությունները, Սեբէրիանոսի «Ճառիկը» և ուրիշ կլասիկ այլ երկեր մարդկության սեփականությունը դարձան շնորհիվ նրանց հայերեն թարգմանությունների: Այդ աշխատությունների հունարեն բնագրերը մինչև օրս էլ կորած են և գտնված չեն, իսկ դրանց հայերեն թարգմանությունները, որ կատարված են եղել դեռևս հինգերորդ դարում, պահպանվել են մինչև այժմ և փոխարինում են բնագրերին: Այդ երկերի հրատարակությունները հայերենից լատիներեն կատարված թարգմանությամբ նրանց մատչելի դարձրին ամբողջ մարդկությանը, որի համար ժամանակին զիտական աշխարհը իր հրախտավարությունը հայտնեց հայ ժողովրդին և նրա գտրավոր կուտուրային:

Մեծ է եղել մեր տղագրության օջախների կատարած աշխատանքը թե՛ հրատարակությունների քանակի և թե՛ նրանց գիտական արժեքի տեսակետից: Սակայն մեր գրականությունը աննախընթաց կերպով հարստացել և դարձացել է միայն սովորական շրջանում՝ հայկական պետականության պայմաններում: Եթե նկատի ունենանք հնաց միայն հրատարակությունների քանակը, ապա ազատորեն կարող ենք ասել, որ համեմատաբար այդ փոքր ժամանակամիջուցում՝ քսանհինգ տարիների ընթացքում, նրանց թիվը շատ ավելին է եղել, քան նախորդ՝ ամբողջ չորս դարերում: Մինչև սովորական կարգերի հաստատումը Հայաստանում, նրա ուերիտորիայի վրա գործել են, այս էլ շատ անկանոն, ոչ ավելի քան 3—4 վայրերի տպարաններ: Ներկայումս տպարանների թիվը Սովորական Հայաստանում հասնում է մոտ հիսունիւ-

Հայաստանի ամենահեռավոր զբջանն ունի իր տպարանը և հրատարակչական գործունեությունը: Ինչ վերաբերում է Երևանին, ապա նա այլևս ոչ թե տպագրության օջախն է, այլ ընդհանրապես հայ կուտուրայի և մասնավորապես տպագրության կենտրոն է հանդիսանում ամբողջ աշխարհում ցրված հայության համար:

Երկրագնդի համարյա բոլոր աշխարհամասերում գոյություն ունեն հայ տպագրության օջախներ: Հայ տպագրության վայրերի ցանցը, բնաշխարհից դուրս տարածվում է Հարավային Ամերիկայից սկսած մինչև Ասված, Հարեշտանից՝ մինչև Շվեդիա: Տպագրության այդ վայրերի թիվը համարում է մոտ երկու հարյուրից, որոնցից մոտ երեք տասնյակը հանդիսացիլ են խոշոր կուլտուրական օջախներ: Սակայն ինչպես որ հայ ժողովուրդը իր պատմությամբ կազմված է ուսումնաժողովուրդի հետ, այնպես էլ նրա տպագիր գրքի կուլտուրան մեծ չափերով աճել ու զարգացել է ուսուական կուլտուրայի խոշորագույն կենտրոններում: Պետերբուրգը, Մոսկվան և ոսուտկան այլ քաղաքները եղել են հայ տպագիր գրքի օջախները: Վերջիններս մեծ դեր են կատարել հայ ժողովուրդի հասուրական քաղաքական և կուլտուրական կյանքում:

Կանգ չառնելով բոլոր օջախների պատմության վրա՝ այսուեղ մենք տալիս ենք ընդհանուր ծանոթություններ միայն մի քանի կարևորագույն օջախների մասին:

(1512 թ. մինչեվ մեր ժամանակը)


Վենետիկը հանդիսանում է հայ առաջին տպագրությունների օրբանը:

Այստեղ, 1512-13 թ.թ., իտալական տպարաններից մեկում լույս է տհսել հայերեն հինգ անուն գիրք՝ առաջին հայ տպագրիչ Հակոբ Մեղալարտի ջանքերով: Այդ հինգ զրքերի թվին է պատկանում 1512 թ. տպագրված առաջին տպագիր հայերեն գիրքը՝ «Պարզպտումարը»:

Հակոբ Մեղապարտի 1513 թ. լույս ընծայած չորս զրքերը հետեյալներն են. «Պատարագատետր», «Աւրաբաթագիրք», «Աղթարք» և «Տաղարտն»: Այս առաջին տպագրությունների շարքում մասնավորապես ուշադրության արժանի է վերջինը՝ «Տաղարանը», որի մեջ զետեղված են մեր միջնադարյան բանաստեղծների՝ Հովհաննես Թլկուրանցու, Ֆրիկի. Մկրտիչ Նաղաշի տաղերը, ինչպես և Ներսիս Շնորհալու 137 չափածո հանելուկները:

Մինչև Մխիթարյանների տպարանի հիմնումը, Վենետիկում տպագրվել են բազմաթիվ հայերեն գրքեր, որոնց թվում «Ճաշոց» (1686 թ.), Մխիթար Սեբաստացու հրատարակությամբ «Աստվածաշունչը» (1733 թ.), նրա երկհատոր «Հայկաղյան բառարանը» (1749-69 թ.թ.), Մ. Զամշյանի եռահատոր «Հայոց պատմությունը» (1784-6 թ.թ.), բոլորն էլ ընտիր հրատարակությամբ:

Վենետիկի ո. Դաղարի կղզում 1789 թ. հիմնվում է Մխիթարյան Միտրանության հայկական տպարանը:



Մ ա տ ի ն ա յ ս կ ա ւ ա ռ ա կ ն ի ս ա  
 ղ ա յ . մ է ժ ո ւ թ ի ւ ն է ։  
 Ո ւ մ է ա ն դ ի հ ս ի ս ա ղ . ս ր տ է շ ս ո ւ  
 թ ի ւ ն է և ա ր է ։ Շ է ձ ա խ զ ի հ ս  
 ի ս ա ղ . ի մ ա ն ա պ ա ր է ե ր թ ա յ . և զ  
 ա ր ո վ գ ա յ : Շ է ա ռ ջ ի դ ի հ ս ի ս ա ղ .  
 գ լ ի ս ա ւ ո ր կ ի ս ի և մ է ժ : Շ է յ ե տ  
 ի դ ի հ ս ի ս ա ղ . ա ւ տ ա ր ո ւ թ ի ւ ն չ  
 ա ր ի . և ա ր ր ա տ ա ն ա յ : Շ է ա ջ  
 ա կ ս ի ս ի մ ի ս ի ս ա ղ . մ է ժ ո ւ թ ի ւ  
 ն գ ա յ : Շ է ճ ա յ ր ս կ ս ի ս ի հ ս ի ս ա

Մ ի է ջ հ ա յ ե բ ն ա ռ ա ջ ի ն տ պ ա գ ի ը զ ր բ ե ց  
 «Պ ա ր զ ա տ ո ւ մ ա ր ց - ի ց , տ պ ա գ ր վ ա ծ վ ե ն ե -  
 տ ի կ ո ւ մ , 1512 թ վ ե ն ։

Այդ տպարանը, որ յուր դոյսությունը շարունակում է  
 մինչև այսօր, հայ տպագրության նշանավոր օջախներ  
 ըից մեկն է հանդիսացել: Այնտեղ տպագրվել են հա-  
 զարի չափ գրքեր՝ պատմաբանասիրական, աշխար-  
 հագրական, գեղարվեստական, կրոնական և այլ բազ-  
 մապիսի բովանդակությամբ: Այդ օջախում են տպագր-  
 վել Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրականքը»  
 (1818 թ.), Փիլոն Երրայացու «Յաղագս Կենդանեաց» աշխատությունները  
 (1822 թ.), Անդրեասիանոսի «Ճառքը» (1827 թ.), հույն,  
 հռոմայիցի և հոյ կրտսերկների երկերը, Մխիթարյան  
 անվանի միաբանների՝ Բագրատունու, Ալիշանի, Ավգեր-  
 յանի, Դաղիկյանի և ուրիշների գիտական և գեղար-  
 վեստական հոյտեապ աշխատությունները: Բացի դը-  
 քանցից, այս օջախում է տպագրվում 1843 թվից մինչև  
 այսօր շարունակվող մեր ամենաերկարակյաց պարե-  
 րականը՝ «Բազմավեպ» ամսագիրը:

### ԱՌՈՑԱԿԱՆ ԱՌՈՒՊՈՒՅԻՒՆ

(1567 թ. մինչեւ մեր ժամանակը)

Հայկական տպագրության պատմության մեջ այս  
 քաղաքի հայ գաղութը հանդիսացել է խոշոր օջախներից  
 մեկը իր բազմաթիվ տպարաններով, տպագրված գրքերի ու պարբերականների քանակով և հայ պոլիգրա-  
 ֆիայի դարպացմանը նպաստող իր ցուցաբերած աշ-  
 խատանքներով:

Առաջին հայկական տպարանը ընդհանրապես հիմ-  
 նադրվել է այս օջախում, 1567 թվին, Արգար գպիր  
 Թոխատեցու ջանքերով: Այնուհետև տպարաններ են  
 հաստատել և շատ ուրիշ անձնավորություններ, որոնց



Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» առաջին հրատարակության տիտղոսաթիվը  
(Կ. Պոլիս, 1709 թ.)

թվում նշանավորներն են Գրիգոր Մարգանցին, Աստ-  
վածատուր Ապուչիլցին, Պողոս Արապյանը, Հովհան-  
նուանիկ Արամյանը, Ճանիկ Արամյանը, եղբայրներ Տեր-  
Ներսիսյանները և ուրիշներ:

Կոստանդնուպոլիսում են հորինվել և զարգացել հայ  
տպագրական տառերի բազմապիսի ձեռքը, հատկապես  
Մյունիստեսյանը, Ճանիկ Արամյանի տառատեսակները:

Այս օջախում են տպագրվել մեր մի շարք պատ-  
մագիրների երկերի առաջին հրատարակությունները՝  
Առաթանգեղոսի (1709 թ.), Փավոտոս Բյուզանդացու  
(1730 թ.), Եղիշեի (1764 թ.), Զենոբ Գլակի (1719 թ.),  
ինչպես նաև Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը»  
(1730 թ.), հինգերորդ գարի հայ մեծ փոլիսոփա Դա-  
վիթ Անհաղթի «Գիրք սահմանացը» (1731 թ.): Բացի  
դրանցից, այստեղ են առաջին անգամ տպագրվել  
«Յայսմաւուրքը» (1706 թ.), Գրիգոր Լուսավորչին  
վերագրվող «Հաճախապատռմը» (1737 թ.), Պաղտա-  
սաք դպիրի երկերը և այլն:

Այս օջախում են տպագրվել նաև Հ. Սվաճյանի  
«Մելու» հայտնի պարբերականը, «Մասիս» ամսագի-  
րը, Հ. Պարոնյանի «Թատրոնը» և այլն:

Կոստանդնուպոլիսում, հատկապես 19-րդ դարի երկ-  
րորդ կիսում և մեր դարի առաջին տասնամյակներին,  
գործել են մի շաբք մասնավոր անհատների և կազ-  
մակերպությունների հրատարակչություններ, որոնք  
լույս են ընծայել բազմաթիվ գրքեր զանազան բո-  
վանդակությամբ, դասագրքեր և մոտ 330 անուն պար-  
բերականներ:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը այս  
քաղաքը հանդիսանում էր արևմտահայության ինչպես  
տպագրության, նույնպիս և կուլտուրայի կենտրոն:

В.О.П.О.В.В.В.В.В.В.В.

Ե արդիւն Առաջնորդոյ Աճի պատճենքը ։

Օ զր սկսեալ (զինի պրոյն Պարիդորի լու  
սամարժին մերը), պատմէ զանց բնուց Ժա  
մանակաց գիտուածոց Երկրին Հայաստա  
նեայց, Հիանանայց պետիցն, և զերեւելի  
եախսկուացն հանգերձ թագաւորօքն։  
Եւ զր ինչ Պակեցան և հասին իվր աղջիս  
Հայոց Իմարսիս և Յունաց. և և Ի մերայ  
նոց Համառօտեալ հասուցանե մինչև յա  
Հարս Պատմագրութեա։

“**କୁର୍ମାମ୍ବିଳୀ** ଲେଖନ୍ତିରେ ଏହାମୁହୂର୍ତ୍ତରେ ଦେଖାଯାଇଥାଏ ।

Փակստու Բյուզանդացու և Հայոց պատմության» առաջին՝ հրատարակության տիտղոսաթերթը (Կ. Պոլիս, 1730 թ.):

(1620 թ. սինծեվ մեր ժամանակը)

Նոր Զուղայի տպարանը հիմնվել է Հայոց Ամենափրկիչ վանքին կից 1640 թվին, երբ գեռ ամբողջ Իրանում և նույնիսկ Մերձավոր Արևելքում գոյություն չուներ և ոչ մի տպարան: Վանքի միաբանները Խաչատուր վարդապետ կեսարացու գլխավորությամբ, առանց տպարան տեսնելու, տնայնադորձական եղանակներով պատրաստում են տպարանի թե մամուլը, թե տառերը և թե թուղթը ու սկսում են զրքեր հրատարակել:

Երանք առաջինը տպագրում են «Հարանց վարք» մեծածավալ գիրքը (1641 թ.), ապա «Ատենի ժամանակիրքը» (1642 թ.): Փորձ են անում տպագրել նաև «Աստվածաշունչը» հայերեն լիգվով: Այնունետեւ վանքի միաբաններից մեկը՝ Հովհաննես Զուղայեցին գործուղվել է Արևելյան Եվրոպա և բերել է այնտեղից նոր տեսակի տառեր և այլ տպագրական պարագաներ:

Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի տպարանը ընդմիջումներով իր գոյությունը շարունակում է մինչեւ մեր օրերը: Անցյալ գարի 80-ական թվականներին այդտեղ տպագրվել է Հ. Տեր-Հովհաննյանի «Պատմություն Նոր Զուղայի» երկնատոր արժեքավոր աշխատությունը, որը միաժամանակ և պարսից պատմություն է:


**Ψ**ԱՌԱՎՈՒԹ  
 սադոյշուդա  
 փառ հասարապա  
 տիւտեբաժանելի  
 օքերրորդուէն.  
 Ք Սայուց ջինքու  
 լու իցեղականսցու  
 Հորեւէ լորուոյն և  
 նր Հոգւոյնյառջ  
 բանզամյաւիտեա  
 նու ու այժմիու  
 անկետ լաւիտեա  
 նու . Ը մն ։

Որոյ ամենառատ  
 շնորհիւն յանկել  
 եալ կատարեցաւ  
 տպագրուէ Հոդի  
 նուագ սաղմոսա  
 ցն դաւթելնդսը  
 մինեկարդաւորու  
 թի հասարակառա  
 լոթեցեկեղեցեթ  
 Հոյաստանեաց .  
 ո Յ ա

Ծամի հազար ձի  
 նսեերորդի եմիան  
 թուոյ ։ Յամսեա  
 նն . Հայոց տրեին  
 երաբ . Եր . Հումայ  
 եցոց Յունվարի  
 ինքուտասսոն ։  
 Քաշիարհիսպառ  
 սից . Ալսքայա  
 նիստ . բաղաքիս Շ  
 ԴՐՈԳ 202 կոչեցե  
 լոյ . որայէմ առ  
 պսհանարտա ձայ  
 նի . Իւդեւդաքաղա  
 քիսնորթուլուուս  
 Ընդ հովանեա  
 սի ամենա փրկչի  
 վանիցն . Որեմն  
 նաստանկուսակրօ  
 նիցբանաւիրաց .  
 Իւթեաւորուէն  
 պարոից Շահսաք  
 լոյն .  
 Եր իշխառապետա  
 լ Ե

Մի էջ սԱտենի ժամադրք-ից, տպագրված  
 Եար Զուղայում 1642 թվին:

Ա. Մ Ա Տ Ե Ր Կ Ա. Մ  
(1660 թ. մինչև 1717 թ.)

Հոլանդիայի այս նշանավոր քաղաքում 17-րդ դարում գոյություն ուներ հայկական մի այնպիսի ստվար զաղութ, որ նա կառուցել էր նույնիսկ իր սեփական եկեղեցին։ Այդ գարի երկրորդ կեսերից և 18-րդ դարի առաջին տասնամյակներին Ամստերդամում կազմակերպվում է հայ տպագրության մի օջախ, որի շուրջը հավաքված են եղել Հայաստանից եկած մի խումբ ժարդիկ։

Ամստերդամի տպարանի հիմնադիրն է գպիր Մատթեոս Շարեցին, որը էջմիածնից 1656 թվին ուղարկվել էր Արևմտյան Եվրոպա՝ գաղութահայության նյութական օժանդակությամբ մի հայկական տպարան հիմնելու և գրքեր հրատարակելու, մասնավորապես հայերեն «Աստվածաշունչը»։ Շարեցուն հաջողվում է 1660 թվին հիմնել Ամստերդամի տպարանը, որի համար տառեր փորագրել է տալիս հայտնի Էլզեսի վիր եղբայրների տպարանի տառերի փորագրիչին։ Մատթեոս Շարեցին կարճ ժամանակից հետո, 1661 թվին վախճանվում է և նրա սկսած գործը շարունակում են ուրիշները։

Առաջին շրջանում Ամստերդամի տպարանում կենտրոնական դիմքն է եղել Ռուկան Երեանցին, երկրորդ՝ շրջանում՝ Թովմաս Նուրիջանյանը։ Այդ գործարանումըն են աշխատել նաև Ռուկան Երեանցու եղբայր Ավետիս Ղլիճենցը, Կարապիտ Աղըիանեցին, Թովմասի ազգականներ՝ Մատթեոս, Միքայել և Ղուկաս Վանանդեցիները։

Այս օջախում են առաջին անգամ տպագրվել հայերեն «Աստվածաշունչը» (1666 թ.), Մովսես Խորենա-

նացու «Հայոց պատմությունը» (1695 թ.), սրան վերագրվող «Աշխարհացույցը» (1668 թ.), «Աղվեսադիրքը» (1668 թ.), «Եարականը» (1664 թ.), հայերեն առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացույցը» (1695 թ.), ինչպես նաև Առաքել Դավրիժեցու «Պատմությունը» (1669 թ.) և այլ գրքեր։ Վերջին հրատարակությունը ուշագրության արժանի է նաև նրանով, որ Առաքել Դավրիժեցին մեր պատմիչներից առաջինն էր, որի կենդանության օրոք տպագրվեց իրերկը։ Առաքել Դավրիժեցին մեռել է 1670 թվին։

Այստեղ է տպագրվել նաև Սկրողերի «Արամեան լեզուին գանձ» հայագիտական հայտնի աշխատությունը (1711 թ.), որի մեջ բացառիկ արժեք է ներկայացնում մեր արևելյան աշխարհաբարի առաջին քերականությունը։

## ԶՄՅՈՒԹՆԵՐԸ

(1676 թ. մինչեվ 1930-ական թվեր)

Այս քաղաքում հայերեն գրքեր տպագրվել են դեռևս 17-րդ դարի 70-ական թվերից։ Այնուհետև 85 տարվա ընդմիջումից հետո ոմն Մահատեսի Մարկոս սարքագորում է իր տպարանը և լույս է ընծայում երեք անուն գիրք, որոնց թվում՝ առաջին անդամ եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (1762 թ.)։

Հայ տպագրության այս օջախում գործել են տասսից ավելի տպարաններ, որոնցում տպագրվել են բազմաթիվ գրքեր ու պարբերականներ։ Այդ տպարաններից ամենից ավելի բեղմնավոր է եղել Տետեյան եղբայրների տպարանը։ Այս օջախում տպագրվել են մեծ քանակությամբ թարգմանական գեղարվես-

առական երկեր, գլխավորապես արևմտանվրովական նշանավոր հեղինակներից, ինչպես օրինակ՝ Շեքսպիրից, Գյոթեից, Վոլթերից, Մոլիերից, Հյուգոյից, Լամարթինից, Ժյուլ Վեննից, Մյուսենից, Վալտեր Սկոտից, Պրեվոյից, Ալ. Դյումայից և ուրիշներից։ Այս տեղ որպես թարգմանիչներ հայտնի են եղել Գր. Զիլինկիրյանը, Տետեյանները, Մ. Մամուրյանը, Գ. Մսերյանը, Մ. Նուպարյանը և ուրիշները։

Այս օջախումն է հրատարակվել նաև Դ. Պալտառ դարյանի «Արշալույս Արարատյան», Մ. Մամուրյանի «Արևելյան մամուռ» պարբերականները և այլն։

Մեր դարի առաջին տասնամյակներում Զմյուռնիայում, հայտնի էր Քեշիշյանի տպարանը, որտեղ տպագրվել են մի շաբթ թերթեր և ամսագրեր։

### Է Զ Մ Ի Ա Յ Ի Ն

(1771 թ. մինչև 1920 թ.)

Առաջին տպարանը հայկական բնաշխարհում հիմնվել է հջմիածնում 1771 թվին Սիմեոն կաթողիկոս Երևանցու ջանքերով։ Տպարանի ծախսը հոգացել է Մադրասում ընակվող ջուղայեցի Գրիգոր Զաքրիկինցը։ Տպարանին կից Սիմեոն Երևանցին հիմնել է նաև սեփական թղթի գործարան, ոույն մարդու նյութական միջոցներով։ Հետագայում էջմիածնի տպարանը ունեցել է և իր տառաձուլարանը։

Մինչև դարավերջը այս օջախումն են տպագրվել Սիմեոն Երևանցու «Տաղարանը» (1771թ.), «Տօնացույցը» (1774 թ.), «Պարտավճարը» (1779 թ.), Հովսեպոս Ֆլավիոսի «Գիրք պատմութեանց յաղագու Հրեցից ընդ Հոռվմայեցիս և աւերման Երուսաղեմի և Տա-



Հովսեպոս Ֆլավիոսի «Գիւք» պատմութեանց  
յաղագոս պատերազմի հրէից» աշխատության  
տիտղոսաթերթը (Եջմիածին, 1787.թ.):

ճարին հնոյւ (1787թ.) հայտնի աշխատությունը, որի թարգմանությունը լատիներինից կատարել էր Ստեփաննոս իլովացին դեռևս 1660 թվին, և այլ գրքեր:

Եջմիածնի տպարանը ավելի ծաղկել է 19-րդ դարի երկրորդ կեսերին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին: Այս շրջանում տպագրվել են բազմաթիվ գրքեր, որոնց թվում Միսիթար Գոշի «Դատաստանագիրքը» (1880թ.), Սիմեոն Կաթողիկոսի «Զամբող» (1873թ.), «Զայնագընեալ շարականը» (1875թ.), պատմիչներից՝ Ռևտանեսի, Մատթեոս Ռւռայիցու, Զաքարիա սարկավագի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի պատմությունները և այլն:

Այս տպարանում 1867 թվականից մինչեւ մեր դարի տասնական թվականները տպագրվում էր «Արարաց» հայագիտական ամսագիրը:

Այս օջախը տվել է նաև մի շարք հայագիտական աշխատություններ, որոնցից մասնավորապես հայտնի են Մառի, Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միաբան), անգլիացի հայագետ Կոնիբիրի, Մ. Աբեղյանի, Հ. Առաջանի, Հ. Մանանդյանի, Գ. Ղափանցյանի ու սումնասիրությունները:

## Մ Ա. Գ. Ր Ա Յ

(1772 թ. մինչեւ 1876 թ.)

Հնդկաստանի այս վաճառաշահ քաղաքում 18-րդ դարի երկրորդ կեսից առաջացել էր բավական մեծ մի հայ գաղութ, որն ստեղծվել էր հիմնականում Նոր Ջուղայից գաղթած հայերից: Այս օջախում կուլտուրական և քաղաքական գործունեություն է ցույց տվել Շահամիր Սուլթանում Շահամիրյանը: Նա 1772

թվին հիմնել է հնդկահայոց առաջին տպարանը և տպագրել է «Այբբենարան» (1772 թ.), «Նոր տետրակ որ Կոչի Յորդորակ» (1772 թ.) և «Որոգայթ փառաց» (1773 թ.) քաղաքական բնույթի նշանավոր գրքերը, որոնք մեծ զեր են խաղացել մեր հասարակական-քաղաքական կյանքում:

Երկրորդ տպարանը 1789 թվին հիմնել է Հարություն Շմավոնյանը: Այս օջախում և այս տպարանումն է տպագրվել հայ անդրանիկ պարբերականը՝ «Աղջարար» ամսագիրը Հարություն Շմավոնյանի խմբագրությամբ: Երրորդ տպարանը Մագրասում պատկանել է Սարգիս Աղավալյանին, որը մինչև 1818 թվականին լույս է ընծայել չորս անուն գիրք:

Այս օջախում, գլխավորապես Շահամիր Շահամիրյանի տպարանումն են տպագրվել նաև Մեսրոպ Երեցի «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց» (1775 թ.), Պորֆիյորի «Ներածությունը» (1793 թ.), Հանուեի «Պատմութիւն կարուցն և գործոց Նադըր Շահ թագավորին Պարսից» (1780 թ.), «Պատմութիւն Դահմազի» (1780 թ.), «Նամակ շնորհաց և կահպանութեան ի Տ. Եկատերինա դշխոյն Թուսաց առ ի Հայոց քրիստոնէից բնակողաց ի դաշտն Աղոփ և նորաշեն քաղաքի յանուանեալն Նախիջևան» (1781 թ.), Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիու-յի առաջին բատարակությունը» (1810 թ.), Ֆլորիանի «Նումա Նամակիիոս» (1812 թ.) և այլ գրքեր:

## ՏՐԵԿՈՑ

(1776 թ. մինչեւ 1810 թ.)

Վեհատիկի Միսիթարյան Միաբանության մի հատվածը 1772 թվին հեռանալով ո. Դադարից գալիս հաստատվում է Տրիեստ քաղաքում: Կառավարությունը թույլատրում է Միսիթարյաններին ունենալու իրենց եկեղեցին և նրան կից հիմնելու մի տպարան: Այդ տպարանը հիմնադրվում է 1775 թվին: Իր հիմնադրման թվականից մինչև 1810 թիվը այնտեղ տըպագրվել են երեսունի չափ ինքնուրույն և թարգմանական հրատարակություններ հայերեն և հայատաթուրքերեն: Այս հրատարակությունների շաբթում առանձնապես նշելի են Վիլհելմ Ռոբերտսոնի երկահատոր «Վիպասանութիւն Ամերիկոյ» (1784թ.), այնուհետև հայտնի մեկենաս Մարգար Շենքիմանյանի թարգմանությամբ «Պատմութիւն Մեծին Ճենկիպիսանի» (1788 թ.), «Յիշատակք և զիտողութիւններ»՝ լվերայ կայսրութեան Զինաց» (1788 թ.), Բրահմայի «Ճնորդէնութիւն մարգկային կենաց» (1784 թ.), Եգոր պոսի «Առակների» առաջին հրատարակությունը (1784 թ.) և այլն:

1810 թվին Տրիեստի Միսիթարյանները տեղափոխվում են Վիեննա:

## ԳԵՏՐԵՑՈՒԹՅ

(1781 թ. մինչեւ 1917 թ.)

Առաջին հայկական տպարանը Ռուսաստանում հիմնվել է Պետերբուրգում 1781 թվին: Տպարանի հիմնադիրն է ջուղայեցի Գրիգոր Խալդարյանը, որին նյութական և բարոյական աջակցություն է ցույց տվել Հովսեփի եպիսկոպոսի Արդությանը:

# ԱՐԿԱՇԻՐԵԴԱՆ

Արարեալ Արքայնասուրբ Հայութիւն մա-  
րտ՝ Տն Աւելաշի Հնորհութեց:

Առ պարսկակի յինքեան զուղափառ գահնեսեթեա: և  
զանաներիւր ունադուխ կորդաց՝ Հայութանեացը: Առ  
Եկեղեցւ ևս զհողեշոհ խրասու և զիրկութեա ուստ-  
ուեցը առ ամցեղ կացութեն Եկեղեցն և Աշառէնց:

Տապարեցեա ի Վեհապատ Հայութեան եան Լուսուցու և  
Քանիւր Այս Աթուոյ հօմանին Տն ԶՈՒԿԱՄԻ Եւն  
ցը երանեալ Արքայնասուրբ Աստվածածնի ամենայն Հայոց:

Հրանժան Այս Աթուոյ հօմանին ծայրագյու կուրքի Առաջ  
երեւ և ամ հրամայն կոչու եղան առիւ Հայոց Ապահովութեա  
Առաջնորդ Սահմանեա Եղանակութեա Ապահովութեա: Իսկանա-  
նայ Տն Յանձնայ Արքայնասուրբ Ասր եղինակութեա:

Առ սրբեանն ի առեցա ի պատու հանու Եւթերոյ Անձն  
Արքն իւր:

Յա Տն 1788. ի մայիսի 1. Խակ ի թուուին Հայոց ամի:



## Ա Ր Ե Կ Տ Կ Ե Տ Բ Ի Բ Ր Գ ։

Ի ապարանի Խոալարեց Խոջամովի որդի ի քն համգու-  
ցնալ Վարոն Գրիգորին:

ՀԱՌՄԱՆԱ ԿԱՐԱԱՐՁԱԾՆ ԲԱՐԵԿԱՐԴՈՒԹԱՆԱՆ

Ներկո Շնորհալու «Հնորհանբականի» առաջին  
հրատարակության արտղամաթերթը  
(Ո. Պետերսուր, 1788 թ.)

Այս տպարանը իր հիմնադրման թվականից մինչեւ 1788 թիվը տպագրել է տասնեհինգ անուն գիրք, որոնց թվում հիշատակության արժանի են 1781 թվին տպագրված «Այբբենարանը», որը հանդիսանում է առաջին հայերեն այբբենարան-դասագիրքը Ռուսաստանում, այնուհետև Կլեոպատրա Սաֆարյանի «Բանալի գիտութեան» (1788 թ.), Գր. Խալդարյանցի «Շաւիզ լեզվագիտութեան» (1788 թ.), Ներսես Շնորհալու «Գիրքը որ կոչի ընդհանրական» (1788 թ.) գըրքերը և այլն:

Հաջորդ՝ 19-րդ դարի տասական թվականներին հիմնվում է Հովսեփի սարկավագ Հովհաննիսյանի տըպարանը, որը գործել է մինչև քսանական թվականների վերջերը և լույս է ընծայել մի շաբք գրքեր, որոնց թվում նշանավոր է «Աստվածաշնչի» հրատարակությունը (1817 թ.): Այս տպարանն է, որ Լազարյան ճեմարանը գնում և փոխադրում է Մոսկվա:

Նույն դարի 60-ական թվերին Պետերբուրգում գործել է նաև Ռաֆայել Պատկանյանի տպարանը, որտեղ տպագրվել են նրա և իր հոր Գաբրիել քահ. Պատկանյանի (կեղծանունը՝ «Վերջը կիմանաք») երկերը, ինչպես և Ռաֆայել Պատկանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Հյուսիս» պարբերականը: Այսուհետև Պետերբուրգում բացվել են և ուրիշ հայկական տպարաններ, որոնց մեջ շատ ավելի հայտնի էր «Պուշկինյան արագատիպը»:

Այս օջախում են տպագրվել նաև Մառի, Ն. Աղոնցի, Ք. Պատկանյանի հայագիտական աշխատավայրը:

Digitized by srujanika@gmail.com

(1789 p. սինչեալ 1917 p.)

Պետերբուրգում եղած Գրիգոր Խալդայյանցի տը-  
պաքանը, նրա ժահից հետո, անցնում է Ռուսաստանի  
հայերի հոգեվոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոսի Ար-

**ST. STEPHENOS**

PHOTOGRAPH BY GENE RUEHLER

卷之三

Հայոց գուգակի առաջ Տրաքարութեա զիթառէ  
Վահագաւուն և ԱՎԱ Ապուրուս Քաջան  
այս Խաչուն ու այս ԵԿԵՏԻԼԼ Եկպատ  
րի և կ-Գուգ ըստ Հայ Բազարի և այս  
Եկամադ Բարձր Աղոթութեա Տեղ Եղան  
Եկամադ Եղան Աղոթութեա ածից պիտի պիտի ցածի  
ԱԾ Եկպատ Շնորհած Տան Եղան Եկպատ Եղան  
Եկպատ այս պատրի Հայոց

8-  
S-  
17921  
17921

卷之三

‘**לְבָנָה** וְ**עֲשָׂרָה**, ‘**בְּנֵי** ‘**עַמּוֹד**’

ՆԵՐԱՐԴՅԱՆ

Տեսարակ համառուսա գրքի տիտղոսաթերթը  
(Նոր Նախիջևան, 1792 թ.)

դությանին և կոչվել է «Տպարան նորին բարձր սըր-  
բագնութեան»: Այս տպարանը 1789 թվին փոխադրը-  
վել է Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը: Այստեղ  
մինչև 1796 թիվը տպագրվել են մի շաբք գրքեր, ո-  
րոնց թվում և Ֆենելոնի «Տելեմաքի» առաջին հրա-  
տարակությունը (1793 թ.), Բալանթարյանի «Բժշկա-  
բանը» (1793 թ.):

Հովսեփ Արդությանը 1796 թվին այս քաղաքից  
տպարանը փոխադրում է Աստրախան:

Հաջորդ դարում և այնուհետև Նոր Նախիջևա-  
նում բացվել են և ուրիշ հայկական տպարաններ, որ-  
տեղ տպագրել են մի շաբք գրքեր և պարբերական-  
ներ:

Ա. Ա. Ի. Ա. Ա. Թ. Ա.

(1796 թ. մինչեւ 1873 թ.)

Արեւլյան Հնդկաստանի հայկական այս գաղութը  
տպագրական գործում ցույց է տվել եռանդուն աշխա-  
տանք: Կալկաթայում առաջին հայկական տպարանը  
հիմնել է Հովսեփ Ստեփաննոսյանը: Այս տպարանում  
է, որ առաջին անգամ տպագրվել է Արքահամ Կրե-  
տացու «Պատմությունը» (1796 թ.):

Առաջին տպարանի հիմնադրումից՝ 1796 թվեց մին-  
չև հաջորդ դարի 70-ական թվերը Կալկաթայում հիմ-  
նվել են տասից ավելի տպարաններ: Այդ տպարան-  
ներից համեմատաբար ավելի բեղմանվոր են եղել ի-  
րենց հրատարակչական գործունեությամբ Հայկական  
Մարդասիրական Ճեմարանի և Արարատյան Ընկերու-  
թյան տպարանները: Վերջին տպարանումն են տպա-

Վուրվել Մեսքոակ Թաղիազյանի «Աղգասեր» (1845 թվից) պարբերաթերթը, որը սկզբնական շրջանում լույս էր տեսնում աշխարհաբար և ապա «Աղգասեր Արաբատեան» (1849 թվից) պարբերականը, ինչպես և նրա հեղինակությունները, այն է՝ «Վէպ Վարսենկան» (1847 թ.), «Սոս և Սօնդիպի» (1847 թ.), «Վէպ Վարդգիսի տն» Տուհաց» (1846 թ.), «Ճանապարհորդութիւն ի Հայս» (1847 թ.), «Ճառ զաստիարակութեան օրիորդաց» (1847 թ.), «Պատմութիւն Պարսից» (1846 թ.), «Կարգ և կանոնք և. Սանդուխտ դըպըոցի» (1847 թ.) և այլն:

Կալկաթայի օջախումն է տպագրվել նաև Բեռնարդեն դը Սեն Պիերի և Շատուրիանի երկերի հայերեն թարգմանությունները:

Այս օջախի վերջին տպարաններից են եղել «Արծիկ» և Հովհ. Խաչիկյանի տպարանները:

### Ա. Ե. Ն. Ա.

(1812 թ. մինչեւ մեր ժամանակը)

Վենետիկի Միսիթարյան Միաբանությունից անջատված և Տրեստում գործող վարդապետները տեղափոխվելով Վիեննա 1812 թվին հիմնում են այնտեղ իրենց նոր վանքը և տպարանը:

Տարիների ընթացքում այս տպարանը այնքան է առաջադիմում, որ իր մեծությամբ և բազմաթիվյան հրատարակություններով բռնում է առաջնակարգ տեղով ոչ միայն Ավստրիայի, այլև Եվրոպայի մասշտաբով: Այդ տպարանը մեծ աշխատանք է տարել հայկական պոլիգրաֆիայի գործում, մասնավորապես տպարանի ձուլարանը խոշոր դեր է խաղացել հայ տպագրական

առառատեսակների հորինման և զարդացման բնագավառում:

